

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ի մասնակցին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՄՄ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պարասխանաբանությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (<<ՄՄՄ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պարասխանաբանությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարոխիտության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ

ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:


Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին

«ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ,

Ռուզաննա Բադայան
Տնօրեն



Գևորգ Խաչիսայան ACCA
Աուդիտոր



06 մարտի 2026թ.
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. հունիսի 2-ից 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկարծ ժամանակաշր ջան
	<u>Ծանոթ.</u>
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	5,532
Այլ տոկոսային եկամուտ	2,579
Զուտ տոկոսային եկամուտներ	4 8,111
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	172
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	(243)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ	(71)
Գործունեությունից արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ (վնաս)	581
Զուտ գործառնական եկամուտ	8,621
Անձնակազմի գծով ծախսեր	5 (3,676)
Այլ ընդհանուր և վարչական ծախսեր	6 (2,265)
Շահույթ մինչև հարկումը	2,680
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	7 (482)
Ժամանակաշրջանի շահույթ	2,198
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի	
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստի շարժ	5,667
Ժամանակաշրջանի այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի	5,667
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	7,865

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 6-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	109,583
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	9	215,978
Այլ դեբիտորական պատրճեր		57
Հիմնական միջոցներ	10	4,912
Ընդամենը ակտիվներ		330,530
Պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին		443
Ընթացիկ հարկային պարտավորություններ		530
Այլ պարտավորություններ		496
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	1,196
Ընդամենը պարտավորություններ		2,665
Սեփական կապիտալ	12	
Բաժնետիրական կապիտալ		320,000
Ներդրումային արժեթղթերի գծով վերագնահատման պահուստ		5,667
Չբաշխված շահույթ		2,198
Ընդամենը սեփական կապիտալ		327,865
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		330,530

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026 թվականի մարտի 6-ին:



Դավիթ Հարությունյան

Գործադիր տնօրեն



Արուս Սմբաթյան

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 6-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ներդրում ային արժեթղթերի գծով			
	Բաժնետիրական կապիտալ	վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
2025թ. հունիսի 2-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա շահույթ	-	-	2,198	2,198
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	5,667	-	5,667
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	5,667	2,198	7,865
Թողարկված բաժնետիրական կապիտալ	320,000	-	-	320,000
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	320,000	5,667	2,198	327,865

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 6-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. հունիսի 2-ից 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկարծ ժամանակաշր ջան
	<u>Ծանոթ.</u>
Ժամանակաշրջանի շահույթ <i>Ճշգրտումներ</i> ¹	2,198
Ոչ գործառնական ակտիվներին և պարտավորություններին վերաբերող զուտ տոկոսային եկամուտ	(2,321)
Ոչ ֆինանսական ակտիվների մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	234
Շահութահարկի գծով ծախս	482
 Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություն	
(Ավելացում) նվազում իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(5,532)
(Ավելացում) նվազում այլ ակտիվներում	(57)
(Ավելացում) նվազում այլ պարտավորություններում	939
 Վճարված տոկոսներ	11,141
<i>Գործառնական գործունեությունից սրացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>7,084</u>
 Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(212,355)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(5,146)
Վարկեր	52,650
Վարկերի մարում	(52,650)
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(217,501)</u>
 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	
Փոխառություններից մուտքեր	47,744
Փոխառությունների մարում	(47,744)
Վճարված շահաբաժիններից մուտքեր	320,000
<i>Ֆինանսավորման գործունեությունից սրացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>320,000</u>
 Դրամական միջոցներ և դրանց համարժեքների զուտ աճ	109,583
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	<u>109,583</u>

¹ Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 6-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2025թ-ի հունիսի 2-ին և հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ գործելով ՀՀ օրենսդրության շրջանակներում: Կազմակերպությանը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել է իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների կատարման թիվ 0031 լիցենզիան:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն բաժնետերերի ընդհանուր ժողովն է, իսկ ընթացիկ գործունեությունը իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը: Ընկերության խորհուրդ չի ձևավորվել: Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է մասնակիցների ժողովի կողմից:

Ընկերությունը գործունեություն է իրականացնում բացառապես ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայով թույլատրվող հիմնական և ոչ հիմնական ներդրումային ծառայությունների տեսակներով, մասնավորապես՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման համար հանձնարարականների ընդունում և հաղորդում, իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում, արժեթղթերի երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխման իրականացում, ինչպես նաև արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

Ընկերության իրավաբանական և գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Բայրոնի 12, բն. 42: Ընկերության գործունեության հասցեն է՝ Բայրոնի 12, բն. 42:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը մասնաճյուղեր չունի:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմում է 4 (չորս) մարդ:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությանց և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տրոստադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

3.2 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է

ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

3.3 Ֆինանսական գործիքներ

3.3.1 Ճանաչում և սկզբնական չափում

Ընկերությունը սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Ընկերության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

3.3.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող դասակարգված արժեթղթերի իրական (շուկայական) արժեքի որոշման մեթոդներն են՝

- ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի համար արժեթղթի շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով եկամտաբերության կորը,
- Կարգավորվող շուկայում ցուցակված արժեթղթերի շուկայական արժեքը հաշվարկվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ այդ արժեթղթերով բորսայում հաստատված վերջին գործարքի գին կամ եկամտաբերություն (փակման գին կամ եկամտաբերություն), եթե գործարքի ամսաթվի և հաշվետու ամսաթվի միջև ժամկետը չի գերազանցում մեկ ամիս:
- Այն արժեթղթերի համար, որոնցով կարգավորվող շուկայում գործարքներ չեն իրականացվել կամ վերջին գործարքն իրականացել է ավելի քան մեկ ամիս առաջ, սակայն որոնց համար առկա է շուկա ստեղծող (մարքեթ մեյքեր), շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով շուկա ստեղծողի կողմից առաջարկվող տվյալ արժեթղթի գնանշումները: Ընդ որում, երկար դիրքի հաշվարկի ժամանակ հիմք է ընդունվում այն գինը կամ եկամտաբերությունը, որով արժեթուղթը կարող է վաճառվել, իսկ կարճ դիրքի հաշվարկի ժամանակ՝ այն գինը կամ եկամտաբերությունը, որով տվյալ արժեթուղթը կարող է գնվել:
- Այն պարագայում, երբ արժեթղթերի համար կիրառելի չեն շուկայական արժեքի հաշվարկման՝ սույն կետի նախորդ պարբերություններով սահմանված եղանակները, այսինքն՝ եթե գնանշված շուկայական գինն առկա չէ, այդ դեպքերում արժեթղթերը վերագնահատվում են տարեկան մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա վերջին աշխատանքային օրը՝ գնային մոդելների, զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի, ինչպես նաև շուկայական գնի հաշվարկման համար նպատակահարմար կամ գործնական համարվող այլ մեթոդների միջոցով: Հակառակ դեպքում, եթե արժեթուղթը գործող շուկայում չունի գնանշված շուկայական գին և դրա իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, որպես արժեթղթի շուկայական արժեք ընդունվում է վերջինիս հաշվեկշռային արժեքը:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չպահվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չպահվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չպահվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և

փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Ընկերությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Ընկերությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Ընկերության պահանջը (օրինակ՝ առանց ռեզրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Ընկերությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

3.3.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորդված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում

ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Ընկերության կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ընկերությունը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Ընկերությունը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Ընկերությունը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

3.3.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ վնասը

ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.3.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն գուման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Ընկերության առևտրային գործունեության ընթացքում:

3.3.6 Արժեզրկում

Ընկերությունը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- փոխատվության հանձնառություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտագանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

3.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են այլ բանկերում հաշիվներից, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

3.5 Վարկեր և փոխատվություններ

Վարկերը և փոխատվությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

3.6 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը պարունակում է ճանաչման ենթակա վարձակալության իրավունք: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանն,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

3.7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

Շենքերի վրա կապիտալ ծախսումներ	20
Համակարգիչներ և կապի միջոցներ	1
Այլ հիմնական միջոցներ	8

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

3.8 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 (տասը) տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ: (Համակարգչային ծրագրերի մշակման գծով ծախսերը (օրինակ դիզայն և նոր կամ նորացված ծրագրի թեսթավորում) ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, երբ Ընկերությունը կարողանում է ցուցադրել ոչ նյութական ակտիվի ստեղծման տեխնիկական հնարավորությունն այնպես, որ այն հնարավոր լինի վաճառքի կամ օգտագործման, իր մտադրությունը ստեղծելու ոչ նյութական ակտիվ և այն օգտագործելու կամ վաճառելու, իր ունակությունը օգտագործելու կամ վաճառելու ոչ նյութական ակտիվը, այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու հնարավոր տնտեսական օգուտներ, աշխատանքներն ավարտելու բավարար միջոցների առկայություն և դրանց հստակ գնահատում:

3.9 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի

համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

3.11 Սեփական կապիտալ

Բաժնեդիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4 Ձուտ տոկոսային եկամուտներ

Հազար դրամ	2025թ. հունիսի 2-ից 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկարծ ժամանակաշրջան
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,532
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,321
Այլ	258
	8,111

5 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար դրամ	2025թ. հունիսի 2-ից 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկարծ ժամանակաշրջան
Աշխատավարձ	3,407
Արձակուրդային վճարի գծով հաշվանցում	269
	3,676

6 Այլ ընդհանուր և վարչական ծախսեր

Հազար դրամ	2025թ. հունիսի 2-ից 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկարծ ժամանակաշրջան
Կարճաժամկետ վարձակալություն	250
Անվտանգություն	120
Դեպոզիտարիոն վճարներ	108
Հաղորդակցման և տեղեկատվական ծառայություններ	1,248
Չվերականգնվող ծախսեր	10
Մաշվածություն և ամորտիզացիա	234
Ֆինանսական միջնորդավճարներ	295
	2,265

7 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2025թ. հունիսի 2-ից 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկարծ ժամանակաշրջան
Ընթացիկ հարկ	530
Ժամանակավոր տարբերությունների ձևավորման և հակադարձման արդյունքում հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ	(48)
	482

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	2,680
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	482

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ba3	9,054
Ba3	132
Ba3 (2024)	2,795
Վարկանիշ չունեցող	97,602
	109,583

Ընկերությունն օգտագործում է Moody's վարկանիշային գործակալության տված վարկանիշները՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների պարտքային որակը բացահայտելու համար:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ գտնվում են 1-ին փուլում և չափվում են ամորտիզացված արժեքով:

9 Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	215,978
	215,978

Ընկերությունն օգտագործում է Moody's վարկանիշային գործակալության տված վարկանիշները՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելու համար:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ գտնվում են 1-ին փուլում:

10 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համկարգիչ- ներ և հաղորդակց- ման սարքավորում -ներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2025թ. հունիսի 2-ի դրությամբ	-	-	-
Ավելացում	1,846	3,300	5,146
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,846	3,300	5,146
<i>Կուրակված մաշվածություն և ամորտիզացիա</i>			
2025թ. հունիսի 2-ի դրությամբ	-	-	-
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	(96)	(138)	(234)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(96)	(138)	(234)
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,750	3,162	4,912

11 Հետաձգված հարկեր

Ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություն 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները ժամկետանց չեն դառնում:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ժամանակավոր տարբերությունների շարժերը ներկայացված են հետևյալ կերպ.

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է հետևյալ կերպ.

Հազար դրամ	Շահույթում		Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
	2 հունիսի 2025թ.	կամ վնասում ճանաչված		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	(1,244)	(1,244)
Այլ պարտավորություններ	-	48	-	48
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	-	48	(1,244)	(1,196)

12 Սեփական կապիտալ

12.1 Թողարկված կապիտալ

2025թ. 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառվող բաժնետիրական կապիտալը կազմում է 320 սովորական բաժնետոմս: Բոլոր բաժնետոմսերն ունեն 1,000 հազար դրամ անվանական արժեք և ամբողջությամբ վճարված են:

Սովորական բաժնետոմսեր ունեցողը ժամանակ առ ժամանակ հայտարարված շահաբաժինները ստանալու իրավունք ունի և Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում մեկ բաժնետոմսի համար ունի մեկ ձայնի իրավունք:

12.2 Վերազնահատման պահուստ ներդրումային արժեթղթերի համար

Ներդրումային արժեթղթերի վերազնահատման պահուստը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը մինչև ակտիվների ապաճանաչումը:

12.3 Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են Ընկերության առավելագույն չբաշխված շահույթով, որը որոշվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

2025 թվականի ընթացքում Ընկերությունը չի հայտարարել և չի վճարել շահաբաժիններ:

13 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

13.1 Դատողություններ

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Ընկերությունը գնահատում է այն թիզներ մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են:

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Ընկերությունը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

13.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց:

Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը, ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները:

14 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

15 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք ներկայացված են զուտ արժեքով կամ կհաշվանցվեն համաձայն հաշվանցման համաձայնագրի կամ համանման պայմանագրերի:

16 Ռիսկի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է ներդրումային ընկերությունների համար և Ընկերության գործառնությունների կարևոր տարր է:

Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, կապված են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի հետ:

16.1 Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Ընկերության գործունեությունն ապահովելու համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, այն նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ղեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Ընդհանուր Ժողովին:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

16.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի, այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Միջին արդյունավետ փոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	2025թ.	
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	Արտարժույթ
<i>Տոկոսակիր ակտիվներ</i>		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	9.53%	-

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ:

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2025թ.
	Սեփական կապիտալ
100 բկ զուգահեռ աճ	(4,213)
100 բկ զուգահեռ նվազում	4,213

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժույթային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազամվարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:

Ընկերությունն ունի ակտիվներ, որոնք արտահայտված ենք մի քանի արտարժույթով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ֆինանսական ակտիվների արտարժույթային ազդեցության կառուցվածքը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար	Եվրո	Ընդամենը
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանք համարժեքներ	19,078	5,186	24,264
	19,078	5,186	24,264

Դրամի թուլացումը, ինչպես նշված է ստորև, հետևյալ արժույթների նկատմամբ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, կաճեցնի (կնվազեցնի) սեփական կապիտալը և շահույթն ու վնասը ստորև նշված գումարներով: Այս վերլուծությունը կատարվում է հարկային հիմունքներով և հիմնված է արտարժույթի փոխարժեքի տատանումների վրա, որոնք Ընկերությունը համարում է ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Արտարժույթի փոխարժեքի տատանումից ստացված եկամուտը (ծախսը) չի հարկվում (չի նվազեցվում): Վերլուծությունը ենթադրում է, որ մնացած բոլոր փոփոխականները, մասնավորապես՝ տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	31 դեկտեմբերի 2025թ.
Դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորում	1,908
Դրամի նկատմամբ Եվրոյի 10% արժևորում	519

Դրամի ամրապնդումը վերը նշված արժույթների նկատմամբ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերը նշված արժույթների վրա կունենար վերը նշված գումարներին հավասար, բայց հակառակ ազդեցություն՝ պայմանով, որ մնացած բոլոր փոփոխականները կմնային անփոփոխ:

16.3 Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ:

Ընկերությունը կրում է վարկային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ընկերությունը փորձում է կառավարել իր վարկային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է վարկային ռիսկի վերահսկողության և կառավարման համար:

ՖՀՄՍ 9-ի շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների մոդելի պահանջներին ենթակա Ընկերության ֆինանսական ակտիվներն են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները և այլ դեբիտորական պարտքերը: Այս ակտիվների մասով վարկային ռիսկերի կենտրոնացում չի արձանագրվել: Ոչ մի ակտիվ չի համարվում արժեզրկված և այս ժամանակաշրջանում համապատասխան գումարներ դուրս չեն գրվել:

Ընկերությունը ենթակա է վարկային ռիսկերի պարտքային գործիքների, դրամի շուկայի միջոցների և համանման արժեթղթերի և ածանցյալ ակտիվների մասով: Ֆինանսական ակտիվների այսպիսի դասակարգերը ենթակա չեն ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջներին, քանի որ դրանք չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Այս ակտիվների հաշվեկշռային արժեքները, ՀՀՄՍ 39 և ՖՀՄՍ 9 ստանդարտների համաձայն, ներկայացնում են վարկային ռիսկի առավելագույն չափը այս ֆինանսական գործիքների մասով համապատասխան հաշվետու ամսաթվերի դրությամբ:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ.

	31 դեկտեմբերի 2025թ.
Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները	
Դրամական միջոցներ և համարժեքներ	109,583
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	215,978
Այլ դեբիտորական պատրքեր	57
	325,618

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ՀՀ տարածքում գտնվող պայմանագրային կողմերի հետ են:

16.4 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կարող է դժվարություններ ունենալ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով:

Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները

մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Ժողովի կողմից:

Ընկերությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետերից, բանկերից և այլ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը հետևյալն է.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 6 ամիս	6 ամսից մինչև 1 տարի	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համա- խառն արտա- հոսք	Հաշվեկշ- ռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ							
Կրեդիտորական պարտքեր							
մատակարարներին	443	-	-	-	-	443	443
Այլ պարտավորություններ	496	-	-	-	-	496	496
Ընդամենը							
Ֆինանսական պարտավորություններ	939	-	-	-	-	939	939

16.5 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է գործադիր տնօրենը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,

գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,

կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
էթիկայի և գործարար չափանիշներ,
ռիսկերի մեղմացում:

Ընկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Ընկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են:

17 Իրական արժեքի չափում

Ընկերության ներդրումային կոմիտեն սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ներդրումային կոմիտեն վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ներդրումային կոմիտեն ճշտում է հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ներդրումային կոմիտեն Ընկերության անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

17.1 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ՝ իրական արժեքով				
<i>Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում</i>				
Ներդրումային արժեթղթեր	-	215,978	-	215,978
Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ՝ ամորֆիզացված արժեքով				
Դրամական միջոցներ և դրան համարժեքներ	109,583	-	-	109,583
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	(443)	-	-	(443)
Այլ պարտավորություններ	(496)	-	-	(496)
	108,644	215,978	-	324,622

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

18 Պայմանականություններ

18.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Ընկերությունը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

18.2 Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

19 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, դուստր ընկերությունները (առանձին ֆինանսական հաշվետվությունների համար), ասոցիացված ընկերությունները և համատեղ ձեռնարկությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև (փոխել՝ ըստ անհրաժեշտության):

19.1 Վերահսկողություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միակ բաժնետերը Դավիթ Հարությունյանն է:

19.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ

2025թ.
դեկտեմբերի
31-ին
ավարտված
տարի

Կարճաժամկետ վարձատրություն աշխատակիցներին

635

«ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
2025թ-ի ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերությունը հիմնադրվել է 2025թ հունիսի 20-ին և փաստացի գործունեություն է սկսել իրականացնել 2025թ-ի երկրորդ կիսամյակից: 2025թ-ի ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել Ընկերության գործարար ծրագրով նախատեսված խնդիրների լուծման ուղղությամբ: Մասնավորապես հիմնադրվել են Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումները, աշխատանքներ են սկսել իրականացվել անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ:

Համաձայն Ընկերության ներդրումային քաղաքականության ներդրումները իրականացվել են բարձր հուսալի ֆինանսական ակտիվներում, պետական և կորպորատիվ պարտատոմսերում:

2025թ-ի ընթացքում հաճախորդներին հասանելի են դարձել հետևյալ ծառայությունները՝ արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցում, արտարժույթի առքուվաճառքի գործառնություններ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի ռեեստրավարման և պահառության ծառայությունների միջնորդավորում: Ընկերությունը անընդհատ ուսումնասիրում է ՀՀ ֆինանսական շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ծառայությունների մատուցման եղանակները՝ փորձելով ներդնել նրանց կուտակած փորձը իր կողմից ծառայությունների մատուցման ընթացքում: Դրա արդյունքում որոշակի փոփոխություններ են կատարվել Ընկերության ծառայությունների մատուցման ընթացակարգերում, մշակվել են հաճախորդներից տեղեկությունների պահանջման և հաշվետվությունների տրամադրման նոր ձևեր:

2025թ-ի ընթացքում Ընկերությունը հիմնականում կենտրոնացած է եղել ներդրումային ծառայությունների ներդրման աշխատանքներում, սակայն հետզհետե ավելի ուշադրություն է դարձնելու հաճախորդների ներգրվմանը:

Քանի որ անընդհատ տեղի է ունենում տնտեսական և իրավական միջավայրի փոփոխություն, Ընկերության կողմից ընդունված ծառայությունների մատուցման ընթացակարգերը անընդհատ զգում են փոփոխման և բարելավման կարիք: Այս խնդրի լուծման նպատակով աշխատանքներ են տարվել այդ ընթացակարգերի թերությունները բացահայտելու ուղղությամբ և քայլեր են ձեռնարկվել դրանց վերացման համար: Մասնավորապես փոփոխություններ են կատարվել Ընկերության արտարժույթային փոխարկումների իրականացման կարգում և այլն:

Աշխատակազմի մասնագիտական մակարդակի բարձրացումը Ընկերության առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկն է: Ընկերությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում իր աշխատակիցների ինքնակրթության համար, միշտ խրախուսելով

մասնագիտական մակարդակի բարձրացման ցանկացած ձգտում: Ընկերությունում պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ և դասընթացներ, այդ թվում նաև փողերի վրացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում աշխատակիցների գիտելիքների

բարձրացման համար:

Այս խնդրի լուծումը հատկապես կարևորվում է այն պատճառով, որ ճիշտ կազմակերպած և ավտոմատացված ներքին հսկողական համակարգը հնարավորություն է տալիս էականորեն նվազեցնել գործառնական ռիսկերը հատկապես Ընկերության զարգացման վաղ փուլում:

Ընկերության ներքին միջավայրում տեղի ունեցած երևույթներն իրենց ազդեցությունն են ունեցել Ընկերության գործունեության վրա դրա բոլոր բնագավառներում: Այդ ազդեցությունը դրսևորվել է հետևյալ առումներով.

ա) Ընկերությանը հաջողվել է գործունեության առաջին վեց ամիսների արդյունքներով ունենալ դրական շահութաբերություն:

բ) 2025թ-ի ընթացքում Ընկերությունը մատուցել է հետևյալ ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

- • հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման համար պատվերների ընդունում և հաղորդում;
- իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում;
- իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում;
- արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացում;
- արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:

2025թ. հուլիսից Ընկերությունը սկսել է մատուցել ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայություններից բրոքերային ծառայություններ և իրականացնել արտարժույթի առքուվաճառք, իսկ 2025թ.-ի հոկտեմբերից նաև դիլերային և արժեթղթերի տեղաբաշխման ծառայություններ: Այսպես, 2025 թվականի ընթացքում Ընկերությունն իրականացրել է շուրջ 357.7 մլն ՀՀ դրամ դիլերային գործառնություններ, 86 մլն ՀՀ դրամ բրոքերային ծառայություններ և շուրջ 335.5 մլն ՀՀ դրամ արտարժույթի առքուվաճառք:

Գործառնությունների փոքր ծավալները պայմանավորված են նոր ստեղծված ընկերությանը բնորոշ ենթակառուցվածքների ներդրման ժամանակատարությամբ: Ինչպես արդեն նշվեց, 2025թ. Ընկերության կողմից իրականացվել են շուրջ 86 մլն. ՀՀ դրամի բրոքերային գործառնություններ (մինչդեռ նախատեսված էր 1000 մլն. ՀՀ դրամի ցուցանիշ): Իրականացված երկու գործարքներից մեկը արժույթային սվոփ է եղել: Զգալի թերակատարումը պայմանավորված էր ինչպես Ընկերության կողմից գործարքների մեծ ծավալի կանխատեսմամբ՝ կապված շուկա ավելի արագ մուտքի հետ, այնպես էլ ներդրողների

մոտ պետական պարտատոմսերի նկատմամբ գրավչության անկմամբ՝ կապված տոկոսադրույքների կտրուկ անկման հետ:

Ընկերության 2025թ. իրականացված դիվերային գործառնություններից 212.3 մլն ՀՀ դրամը պայմանավորված էր Ընկերության կապիտալի ներդրմամբ ՀՀ պետական պարտատոմսերում, իսկ 145.4 մլն ՀՀ դրամը ՀՀ պետական պարտատոմսերով երկրորդային շուկայում գործառնություններով: Բոլոր գործարքները իրականացվել են կարգավորվող շուկայից դուրս: Նշենք, որ դիվերային գործառնությունների լիցենզիա Ընկերությունը ստացել է 2025 թվականի հոկտեմբերի 1-ին:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արժեթղթերի պորտֆելը կազմում էր շուրջ 216 մլն. ՀՀ դրամ:

Ինչ վերաբերվում է պորտֆելի կառուցվածքին, ապա այն բաղկացած է ՀՀ պետական միջնաժամկետ պարտատոմսերից: Պետական պարտատոմսերի մակարդակը 2025թ.-ին պլանավորվում էր հասցնել 55 մլն. ՀՀ դրամի: Այսպիսով, ՀՀ պետական պարտատոմսերի մասով նախատեսված ցուցանիշը գերակատարվել է 392.7%-ով՝ պայմանավորված 250 մլն. ՀՀ դրամ կանոնադրական կապիտալի համալրմամբ:

Ընկերության ընդհանուր պարտավորությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են շուրջ 1.2 մլն. ՀՀ դրամ՝ թերակատարելով 2025թ.-ի համար նախատեսված ցուցանիշը մոտ 30 մլն. ՀՀ դրամով (ընդհանուր պարտավորությունների մակարդակը 2025թ. վերջին նախատեսված էր 31.0 մլն. ՀՀ դրամի չափով): Փաստացի անհրաժեշտության բացակայության հետևանքով (2025թ.-ի վերջին եռամսյակում ՀՀ պետական պարտատոմսերի գները կտրուկ աճել են, որը հանգեցրել է արժեթղթերում Ընկերության կողմից ավելի պահպանողական ներդրումային քաղաքականության) հաճախորդներից չի ներգրավվել 30 մլն ՀՀ դրամի չափով պարտավորություններ, որի արդյունքում առաջացել է վերանշյալ շեղումը:

Ինչ վերաբերվում է սեփական կապիտալին, ապա հուլիս ամսից վերջինս աճել է 4.7 անգամ և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 329.3 մլն. ՀՀ դրամ, ինչը գերազանցում է 2025թ.-ի համար նախատեսված ցուցանիշը շուրջ 4.7 անգամ (սեփական կապիտալը 2025թ.-ի համար նախատեսված էր 70.5 մլն. ՀՀ դրամի չափով): Գերակատարումը պայմանավորված է կանոնադրական կապիտալի՝ 250 մլն. ՀՀ դրամով համալրմամբ:

Ընկերության գործունեությունը բնութագրող ամենակարևոր և որոշիչ ցուցանիշը՝ զուտ շահույթը, 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 2.4 մլն. ՀՀ դրամ՝ համապատասխանելով 2025թ.-ի համար նախատեսված ցուցանիշին (2025թ.-ի համար նախատեսված էր 0.5 մլն. ՀՀ դրամի զուտ շահույթ):

զ) Ընկերության եկամուտները բաժանված են տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների. այսպես, 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 8.1 մլն. ՀՀ դրամ՝ գերակատարելով նախատեսված տարեկան ցուցանիշը (3.1 մլն. ՀՀ դրամ) մոտ 261%-ով: Տոկոսային եկամուտներում գերակշռում են ՀՀ պետական արժեթղթերից ստացված տոկոսները (5.6 մլն. ՀՀ դրամ կամ ընդհանուր տոկոսային

եկամուտների 69.1%-ը): Տոկոսային եկամուտների կազմում մեծ կշիռ է ունեցել նաև բանկային մնացորդների դիմաց ստացված տոկոսագումարները, որոնք տարեվերջին կազմել են 2.3 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր տոկոսային եկամուտների 28.4%-ը :

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 0.8 մլն. ՀՀ դրամ, ինչը էապես նվազ է տարեկան ցուցանիշի համար նախատեսված մակարդակից (5 մլն. ՀՀ դրամ): Ոչ տոկոսային եկամուտների հիմնական մասը բաժին է ընկել արտարժույթի առքուվաճառքից զուտ եկամուտներին, որը կազմել է 0.6 մլն ՀՀ դրամ: Ընկերությունը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ-ի ծառայությունների միջնորդավորումից եկամուտներ չի ստացել տվյալ ծառայությունների մատուցումը տարեվերջին մեկնարկելու հետևանքով:

Ընկերության 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսային ծախսեր չի ունեցել, ինչը և նախատեսված էր պլանային ցուցանիշներով:

Ընկերության ոչ տոկոսային ծախսերը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 5.9 մլն ՀՀ դրամ: Արդյունքում թերակատարվել է պլանային ցուցանիշը (7.5 մլն ՀՀ դրամ) 21%-ով: Ոչ տոկոսայի եկամուտների գերակշիռ մասը՝ 3.4 մլն ՀՀ դրամ, կազմում է Ընկերության աշխատակիցների գծով վարձատրության ծախսերը: Ընդհանուր վարչական ծախսերը կազմել են շուրջ 5.6 մլն ՀՀ դրամ պլանավորված 7 մլն ՀՀ դրամի փոխարեն:

դ) Քանի որ Ընկերությունը իր գործունեությունը սկսել է 2025թ-ի հուլիս ամսից և որոշակի ժամանակահատված նվիրել է հիմնական և ոչ հիմնական ներդրումային ծառայությունների ներդրմանը և կառուցվածքային ստորաբաժանումների ձևավորմանը, հաճախորդների ներգրավման առումով ոչ շատ ակտիվ քաղաքականություն է վարել: Այնուհանդերձ, 2025թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բրոքերային ծառայությունների շրջանակում ներգրավված հաճախորդների քանակը կազմել է 18, որոնք հիմնականում իրականացրել արտարժույթի առքուվաճառքի գործառնություններ 335.5 մլն ՀՀ դրամ ծավալով, արտարժույթային սվոփ գործարքներ 72.7 մլն ՀՀ դրամ ծավալով, ինչպես նաև արժեթղթերով բրոքերային գործառնություններ 13.4 մլն ՀՀ դրամ ծավալով: Ընկերությունը շարունակելու է ուղղորդել իր գործունեությունը դեպի ներդրողների պահանջմունքների լավագույնս բավարարելը, ինչի մասին են վկայում Ընկերության կողմից վարվող սակագների ճկուն քաղաքականությունը, հաճախորդներին ճշգրիտ ու լիարժեք տեղեկատվությամբ ապահովող ինտերնետային կայքի առկայությունը: Ընկերությունն հաճախորդներից իրավաբանական անձինք են, այդ թվում ներդրումային ֆոնդեր, ֆիզիկական անձինք են:

Ինչ վերաբերվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ռեեստրավարման և պահառության ծառայությունների՝ Ընկերության միջոցով միջնորդավորմանը, ապա 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 8 հաճախորդ, որից 3 ֆիզիկական անձ և 5 իրավաբանական անձ: Առաջիկա տարիներին մարկետինգային միջոցառումների ակտիվացման միջոցով Ընկերությունը շարունակելու է աշխատանքներ տանել

հաճախորդների բազայի ընդլայնման, հաճախորդների հետ կայուն և երկարատև հարաբերությունների կառուցման և զարգացման, ինչպես նաև սեփական ճանաչելիության բարձրացման ուղղությամբ:

ե) Ընկերության կառավարման համակարգը մշտապես գտնվում է Ընկերության մասնակիցների ուշադրության կենտրոնում: Ընկերության կառավարման համակարգը կառուցվել է հաշվի առնելով մի շարք չափանիշներ՝ հաճախորդների քանակը, գործառնությունների քանակը և տեսականին, օրենսդրական պահանջները, ռիսկերի արդյունավետ կառավարումը, աշխատակիցների փորձառությունը և գիտելիքները: Այդ չափանիշներից ելնելով Ընկերությունում կառուցվել է որոշումների կայացման երկաստիճան համակարգ՝ մասնակիցների ընդհանուր ժողով և գործադիր մարմին: Կառավարման մարմինների լիազորությունները և պարտականությունները հստակ նկարագրված և սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ԿԲ ենթաօրենսդրական ակտերով, Ընկերության կանոնադրությամբ և մասնակիցների ժողովի կողմից ընդունված ներքին ակտերով: Ընկերության ներքին ակտերով նկարագրվում են Ընկերության բիզնես գործընթացները և ընթացակարգերը: Ընկերության սակագնային, գովազդային և ներդրումային քաղաքականությունները, հնարավոր ռիսկերի ընդունելի մակարդակը, եկամտաբերության ցանկալի մակարդակը, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և այլ կարևոր չափանիշները և ուղենիշերը (benchmarks) սահմանվում են մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, այդ թվում՝ սույն գործարար ծրագրով: Ընկերությունում ստեղծված չէ խորհուրդ, քանի որ Ընկերության զարգացման ներկա փուլում խորհրդի գործառույթները բավականին արդյունավետ իրականացնում է մասնակիցների ընդհանուր ժողովը: Սակայն կառավարման համակարգը քարացած երևույթ չէ, և վերը նշված չափանիշների փոփոխությանը զուգընթաց ենթակա է վերափոխման և ադապտացման՝ Ընկերության ռազմավարական նպատակներին համահունչ:

Ընկերության ներքին հսկողության համակարգն ունի երկու մակարդակ՝ ինքնահսկման և վերահսկման: Յուրաքանչյուր աշխատակից, ելնելով իր լիազորություններից և պարտականություններից, ինքնուրույն է հսկում իր կողմից իրականացվող գործառույթների կատարման ճշտությունը: Այդ գործառույթների իրականացման ճշտության և կանոնակարգիչ ակտերին համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Ընկերության ներքին աուդիտորի կողմից՝ ներքին վերահսկողության գործառույթների միջոցով (մոնիտորինգ, ստուգում, համալիր ստուգում): Ընդհանուր առմամբ, Ընկերությունը տեսնում է իր ներքին վերահսկողական համակարգի զարգացումը որպես շարունակական գործընթաց՝ Ընկերության զարգացմանը զուգահեռ:

Ընկերությունում գործում է նաև ներքին աուդիտի ստորաբաժանումը, որը վերահսկում է Ընկերության գործունեության բոլոր բնագավառները: Այդ ստորաբաժանումը, բացի Ընկերության գործունեության անընդհատ մոնիտորինգից, ամեն ամիս իրականացնում է նաև Ընկերության գործունեության ստուգում և բացահայտված ցանկացած խախտման կամ

թերացման մասին տեղեկություն է ներկայացնում Ընկերության գործադիր մարմնին, Կենտրոնական բանկին, ինչպես նաև կարգավորվող շուկայի օպերատորին և հաշվարկային համակարգի օպերատորին: Միաժամանակ ստորաբաժանումը նաև տարեկան հաշվետվություն է ներկայացնում Ընկերության կառավարման բարձրագույն մարմնին՝ բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Ընկերության նպատակներին համահունչ, և հետապնդում է Ընկերությանը գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերից զերծ պահելու նպատակը: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Ընկերության ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասը:

Ռիսկերի կառավարումը ներառում է այնպիսի միջազգայնորեն ընդունված մոտեցումները, ինչպիսիք են՝ ռիսկերի նվազեցմանն ուղղված գործընթացները, ռիսկերի ընդունումը, երբ դրանց նվազեցման արդյունքում հնարավոր օգուտները գերազանցում են գնահատված ծախսերը կամ դրանց նվազեցումը գործնականորեն անհնար է:

Ռիսկերի ամենօրյա կառավարման գործառույթն իրականացվում է Ընկերության Գործադիր տնօրենի կողմից: Գործադիր տնօրենն օրական հետևում է շուկայական զարգացումներին, հավաքագրում և ուսումնասիրում է փորձագիտական գնահատականները, կարճաժամկետ կանխատեսումներ է անում շուկայի վարքագծի վերաբերյալ, բանակցություններ է վարում հաճախորդների և գործընկերների հետ իրենց սպասումների վերաբերյալ: Այդ միջոցառումների շնորհիվ է, որ Ընկերությունը կարողանում է արդյունավետ կառավարել իր ռիսկերը, որոնցից թերևս ամենաազդեցիկն Ընկերության համար հանդիսանում է շուկայական ռիսկը:

Կարևորելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործողությունները՝ Ընկերությունը շարունակում է զարգացնել և բարելավել ներդրված գործառույթներն այս ոլորտում: Ընկերությունում իրականացվում են ներքին սեմինարներ ՓԼ/ԱՖ կանխարգելման թեմայով, որոնք ապահովում են Ընկերության աշխատակիցների իրազեկվածությունը ներքին և օրենսդրական ակտերին:

Ընկերությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված, ինչպես նաև ներքին նորմատիվների և այլ պահանջների խստագույն պահպանման համար: Ամփոփելով, պետք է նշել, որ ռիսկերի արդյունավետ կառավարումը մշտապես գտնվում է Ընկերության ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Ընկերությունը առանձնացված ստորաբաժանումներ չունի: Ընկերությունը 2025թ-ի վերջի դրությամբ ունի 4 աշխատակից, որոնք ունեն ֆինանսական համակարգում երկարամյա աշխատանքային փորձ և որակավորումներ:

զ) Ընկերությունը շատ է կարևորում նորամուծությունները որպես բիզնեսի զարգացման և առաջարկվող ծառայությունների տարատեսակացման կարևոր ուժ: Այս փուլում նորարարության կիրառումը Ընկերությունը տեսնում է առաջարկվող ներդրումային

ծառայությունների թվայնացման մեջ, որոնց գծով ներդրման աշխատանքները կսկսեն 2026 թվականից: Զուգահեռ Ընկերությունը կփորձի հասարակությանը առաջարկել նոր ներդրումային պրոդուկտներ, որոնք կխթանեն Ընկերության վաճառքները:

2025թ. ընթացքում Ընկերության քաղաքականության և գործունեության արդյունքների վրա որոշակի ազդեցություն են ունեցել ինչպես ՀՀ ներքին, այնպես էլ միջազգային շուկաներում տեղի ունեցած գործընթացներն ու իրադարձությունները:

Չնայած այն հանգամանքի, որ Ընկերությունն ուղղակիորեն չի առնչվում միջազգային շուկաների հետ, այնուամենայնիվ, 2025թ. ընթացքում շարունակվող համաշխարհային տնտեսության աճի տեմպերի վերականգմանն ուղղված դրական տեղաշարժերն ազդեցություն են թողել ՀՀ ֆինանսական շուկայի վրա, որն, իր հերթին, ազդել է նաև Ընկերության գործունեության վրա: Արտաքին հատվածում արձանագրված համաշխարհային տնտեսական զարգացումներն ընթացել են ՀՀ ԿԲ կանխատեսումներին համահունչ, իսկ ապրանքահումքային միջազգային շուկաներում պահպանվել է գնաճային միջավայրի թուլացման միտումը: Այս իրավիճակում ՀՀ հիմնական գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվել է դրամավարկային պայմանների մեղմացումը՝ հանգեցնելով արտաքին աշխարհում տոկոսադրույքների նվազեցմանը:

Հաշվի առնելով ֆինանսական համակարգում նկատվող մրցակցության սրացման միտումները՝ Ընկերությունը մշտապես իրականացնում է մրցակցային դիրքի վերլուծություն, շուկայի այլ մասնակիցների ծառայությունների պայմանների ուսումնասիրություն, որոնց արդյունքում առաջարկվում են մրցունակ սակագներ:

Ընկերության որոշ սպասելիքներ, կապված ՀՀ կապիտալի շուկայի զարգացման հետ, շարունակում են արդարանալ. մասնավորապես, արժեթղթերի հաշվարկային և վճարային համակարգերի ենթակառուցվածքների զարգացման ու կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները, արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում արժեթղթերից բխող իրավունքների հաշվառման և հաշվարկային ենթակառուցվածքի լավագույն ստանդարտների և պրակտիկայի ներդրման աշխատանքները, իրական հատվածի մասնակիցների կողմից թողարկումների խթանման համակարգի ներդրման հետ կապված միջոցառումները և այլն: Վերոնշվածը հիմքեր կստեղծի Ընկերության ներդրումային ծառայությունների հետագա աշխուժացման համար:

«ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ գործադիր տնօրեն



Դ. Հարությունյան

14/04/2026թ.

«ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2025թ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ղեկավարությունը հայտարարում է, որ պատասխանատվություն է կրում.

1) Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առուժներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման, մասնավորապես՝

ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,

գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,

դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

ե. ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

2) Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործունեության համակարգի ներդրման համար,


3) Ընկերության ակտիվների պահպանության, խանրդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ մեր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Հավաստիացնում ենք, որ ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

14.04.2026թ



Դավիթ Հարությունյան

Արուս Սմբատյան